Արձանագրություն N 3

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/18» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան 27.12.2018թ.
ժամը՝ 10:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գասպարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Վաթինյան, Ա. Երմազյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

1. Փաստաթղթերը գնահատելու վերաբերյալ

(Ա. Գասպարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ «Գրին Վեյ Թրևլ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել է անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 48-րդ կետով «Գրին Վեյ Թրևլ» ՍՊԸ-ի հայտը գնահատեց բավարար և որոշեց հայտարարել

3, 4-րդ չափաբաժինների մասով «Գրին Վեյ Թրևլ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից

-2, 4, 5-րդ չափաբաժինների մասով՝ ԷԼԻՏ ԷՍՎԵ ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից

8-րդ չափաբաժնի մասով՝ ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

2. Ընթացակարգը 1-ին և 7-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին

(Ա. Գասպարյան)

2.1 Հաշվի առնելով, որ 1-ին և 7-րդ չափաբաժինների մասով մասնակիցների գնային առաջարկները գերազանցել են գնման առարկայի նախահաշվային արժեքը՝ համակարգի կողմից նշված չափաբաժինների մասով մասնակիցների հայտերը մերժվել են և ընթացակարգը հայտարարվում է չկայացած,

2.2 Հաստատել ընթացակարգը 1-ին և 7-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Գասպարյան)

3.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 27.12.2018թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Գասպարյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3.1 կետում նշված փաստաթղթի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Գասպարյան

Անդամներ՝ ---------- Մ. Վաթինյան

---------- Ա. Երմազյան

Քարտուղար՝ ---------- Ի. Եղիազարյան